ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 34 -Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1- ին մասի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշումը և 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 40-Ա որոշմամբ ստեղծված «Քաղաքացիների ընդունելության կազմակերպման նպատակով ստեղծված հանձնաժողովի» նիստի թիվ 1 արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից՝ հրատապ արձագանքման անհրաժեշտությունից ելնելով, սոցիալական աջակցության նպատակով, 36 քաղաքացիների հատկացնել 1510000 (մեկ միլիոն հինգ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ.ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. փետրվարի 12
ք. Եղեգնաձոր